Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

ԲՄԿ ՊՈՒՀ «Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան»-ը (այսուհետ՝ Գնորդ) և «Լուսիկ Խաչատրյան Նիկալայի» ԱՁ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 06.05.2024 թվականին կնքված «ԳՀԱՊՁԲ-08/24-9» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով, նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է Պայմանագրի N 1 հավելվածով»:

Վաճառողը պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել է պայմանագրի N 1 հավելվածով 1-ին 37-րդ չափաբաժնի Տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Գնորդը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի (մասնակի) հրաժարվում է կնքված պայմանագրի 37-րդ չափաբաժնով սահմանված ապրանքից՝ համարելով այն լուծված՝ 165 000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վաճառողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները

(տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 4.2 և հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ և 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ ԲՄԿ ՊՈՒՀ «Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան»-ի «Արդշինբանկ» ՓԲԸ-ի 2480100103250010 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Միաժամանակ, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տաս օրացուցային օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները («ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի «Արդշինբանկ» ՓԲԸ-ի 2480100103250010 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀՌՀ ռեկտոր՝ **Է. Մ. Սանդոյան**